

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդս մեծ վշտով արձանագրում է Հայ Եկեղեցուց անջատված մի խումբ հայերի հրատարակած «Հայ Եկեղեցու տագնապը» վերնագիրը կրող 211 էջանոց անգլերեն գիրքը, Անթիլիասում տպված, որ գրի է առնված և օտար շրջանակների մեջ տարածված, Հայ Եկեղեցու շահերի և հայ ժողովրդի ճշմարիտ ապրումների ու իղձերի հետ աղերս չունեցող նպատակներով:

Մուրով գրված այս սև գիրքը սկզբից մինչև վերջ լի է մեր Եկեղեցին ու ամբողջ մեր Ազգը վարկաբեկել փորձող անավոր զրպարտություններով և հանդիսանում է ամոթ հայի պատվավոր անվան համար:

Այս գիրքը մահավնիռ է իր իսկ հեղինակներին, որոնք քաջությունը չունեն հրապարակ գալու իրենց իսկական անուններով:

Գերագույն Հոգևոր Խորհուրդս խոր վրդովմունքով դատապարտում է մեր օրերի այս սև գրքի հեղինակներին և կոչ է անում Սփյուռքի բոլոր հայ հոգևորականներին և համայն հայ հավատացյալներին՝ մնալ անսասան ու խաղաղ, և առավել լավատեսությամբ ու նվիրումով աշխատել՝ ի շինություն մեր բարեպաշտ ժողովրդյան հոգևոր կյանքի, ի միասնություն մեր Ս. Եկեղեցու և ի պայծառություն հավերժական Ս. Էջմիածնի:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

23 հունվարի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ